ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/245

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ

Մասնակից՝ «Պրաքսիս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2» գնանշման հարցման ընթացակարգ, ավտոլվացման և քիմ. մաքրման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14844-2021 գրությամբ «Պրաքսիս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 07.09.2021թ.-ի թիվ Հ.Մ//02-308-21 գրության հիման վրա, 14.09.2021թ.-ին «Պրաքսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.09.2021թ.-ին:

16.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/245 համարի ծածկագիրը:

28.09.2021թ.-ին և 14.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.10.2021թ.-ին:

2. **«<u>Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 07.09.2021թ.-ի թիվ Հ.Մ//02-308-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կարիքների համար «Ավտոլվացման և քիմ. մաքրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ին հայտարարվել է ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

2020 թվականի դեկտեմբերի 21-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստում, մրցույթի մասնակից «Մագուայրս» ՍՊԸ-ն, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ճանաչվել է ընտրված մասնակից:

2020 թվականի դեկտեմբերի 29-ին, հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: 2020 թվականի դեկտեմբերի 29-ին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության և «Մագուայրս» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր:

2021 թվականի մայիսի 26-ին գրություն է ստացվել «Մագուայրս» ՍՊ ընկերությունից, ըստ որի, ընկերության անունը փոփոխվել է՝ դառնալով «Պրաքսիս» ՍՊԸ /կից գրությունը/:

2021 հուլիսից սկսած՝ ավտոլվացման կետը պարբերաբար աշխատել է աշխատանքային գրաֆիկի էական խախտումներով, ինչի արդյունքում, տրամադրված կտրոնները չեն իրացվել, և ավտոմեքենաները հաճախակի չեն սպասարկվել, իսկ 2021 թվականի օգոստոսի 1-ից «Պրաքսիս» ՍՊԸ այլևս չի մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունը /կից գրությունը/:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Պրաքսիս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Պրաքսիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Պրաքսիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14844-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/206 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Պրաքսիս» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավտոլվացման և քիմ. մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կատարողը մատուցելու է սույն ծառայությունները ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա, համաձայնագրերի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 31.12.2021թ.-ը:

v. Պատվիրատուի և «Պրաքսիս» ՍՊԸ-ի միջև 15.01.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կատարողը մատուցելու է սույն ծառայությունները 15.01.2021թ.-ից մինչև 31.12.2021թ.-ը:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 01.09.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 30.08.2021թ.-ի Ա.Հ./03-73/21 թիվ 27/1069 ծանուցման համաձայն՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության և «Պրաքսիս» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել է «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1» գնման պայմանագիրը, որով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 2021

թվականի դեկտեմբերի 31-ը: Սակայն, հուլիս ամսվա ընթացքում ավտոլվացման կետը պարբերաբար աշխատել է աշխատանքային գրաֆիկի էական խախտումներով, ինչի արդյունքում տրամադրված կտրոնները չեն իրացվել և ավտոմեքենաները հաճախակի չեն սպասարկվել, իսկ 2021 թվականի օգոստոսի 1-ից «Պրաքսիս» ՍՊ ընկերությունն այլևս չի մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունը:

Հաշվի առնելով «Պրաքսիս» ՍՊ ընկերության պայմանագրային պարտադրությունների չկատարումը, և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի բ/ ենթակետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով գնման պայմանագիրը: Միաժամանակ Մասնակցին տեղեկացրել են, որ պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված, և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագրի միակողմանի լուծման մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14844-2021 գրությամբ «Պրաքսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը

կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավտոլվացման և քիմ. մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի և «Պրաքսիս» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կատարողը մատուցելու է սույն ծառայությունները ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա, համաձայնագրերի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 31.12.2021թ.-ը: Պատվիրատուի և «Պրաքսիս» ՍՊԸ-ի միջև 15.01.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը, որի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կատարողը մատուցելու է սույն ծառայությունները 15.01.2021թ.-ից մինչև 31.12.2021թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 01.09.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 30.08.2021թ.-ի Ա.Հ./03-73/21 թիվ 27/1069 ծանուցման համաձայն՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության և «Պրաքսիս» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել է «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1» գնման պայմանագիրը, որով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Սակայն, հուլիս ամսվա ընթացքում ավտոլվացման կետը պարբերաբար աշխատել է աշխատանքային գրաֆիկի էական խախտումներով, ինչի արդյունքում տրամադրված կտրոնները չեն իրացվել և ավտոմեքենաները հաճախակի չեն սպասարկվել, իսկ 2021 թվականի օգոստոսի 1-ից «Պրաքսիս» ՍՊ ընկերությունն այլևս չի մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունը:

Հաշվի առնելով «Պրաքսիս» ՍՊ ընկերության պայմանագրային պարտադրությունների չկատարումը, և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի բ/

ենթակետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է «ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1» ծածկագրով գնման պայմանագիրը: Միաժամանակ Մասնակցին տեղեկացրեկ են, որ պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված, և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագրի միակողմանի լուծման մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Պրաքսիս» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 30.08.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 01.09.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում

հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պրաքսիս» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14844-2021 գրությամբ «Պրաքսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/245 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Պրաքսիս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**